

14575

ԲԱԳՈՒԱՅ ՅՐԱՏ, ԸՆԿԵՐԻՊԵԱՆ

ՅԻՄՆԱԴԻՐ

Պ. ՊՕՂՈՍ ՂՈՒԿԱՍԵԱՆԻՆ

Բ. Յ. Կ. ՄԻՈՒԹԵԱՆ ՅՐԱՏ, ՄԱՍՆԱՃԻԻՂԻՑ



ՑՐԻՆԻ



891.71

0-71



19 NOV 2010

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Բ. Հ. Կ. Մ.

Հրատարակչական մասնաճյուղի № 3.

Փողոցական դրքերի շար. № 2.

# ՑՐԻՆԻ



Арм.  
2-880a

837 71  
0-71

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Բ. Հ. Կ. Մ.  
Հրատարակչական մասնաճիւղի № 3.  
Ժողովրդական գրքերի շար. № 2.

# ՑՐԻՆԻ

(ՕՍՏՐՕԳՈՐԱԿՈՒՑ)

Инв. № 17425



Բ Ա Կ Ո Ւ  
Տպարան Բազ. Հայոց Հրատ. Ընկ  
1908.

03 SEP 2013

14575

088-217

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՎՄԿԳՑ



39512-63

# ՑՐԻՆԻ

Այժմեան սերունդը փոշի կը դառնայ,  
Կանցնեն շատ դարեր, կը գայ նոր սերունդ  
Եւ երախտագէտ սրտով անա նա  
Կը յիշատակէ միշտ քո սուրբ անունդ:

Երանի՜ նրան ո՛վ կուի դաշտում  
Հայրենեաց համար իր շունչը փչեց.  
Ազգակիցների սրտի խորքերում  
Կանգնած է նրա արձանը միշտ անեղծ:  
(«Ցրինի» Ողբ. Կէրների, Ար. Ե. Տես Բ.):

Ամբողջ Եւրոպան տասնվեցերորդ դարում  
դողում էր թուրքերի առաջ:

1453 թւականին էր, որ Ֆաթիհ Սուլթան  
Մէհմեմէտը տիրեց Կոստանդնուպօլսին, որը  
մինչև այդ ժամանակ ուղղափառ Բիւզանդիայի  
մայրաքաղաքն էր: Այդպիսով այդ քաղաքը՝ որ  
առաջ պատկանում էր քրիստոնեաներին, այժմ  
դարձաւ թուրքերինը նոր մահմեդական տէրու-  
թեան մայրաքաղաքը. և խաչը՝ որն առաջ փայ-

լում էր ս. Սօֆիաի տաճարի գմբեթի վրա, այժմ տեղի տվեց տաճկական կիսալուսնին:

Բայց Թիւրքիան՝ և՛ սառւել անարկու դարձաւ քրիստոնեաների համար սուլթան Սիւլէյման Բ.-ի ժամանակ:

Այդ խստասիրտ և ինքնասէր սուլթանը կարծում էր, թէ իր բոլոր փառքը միակ նրա մէջ պիտի լինի, որ ամենքը խոնարկեն և զոզան իր առաջ: Նուաճել բոլոր աշխարհը, կազմել մի անագին մանմէտական տէրութիւն, որի միակ գլուխը լինէր ինքը՝ Սիւլէյմանը, — ահա այդ սարսափելի մարդու միակ ցանկութիւնը:

Նրա ամբողջ կեանքը փառաւոր յաղթութիւնների մէջ էր անցել և իր 44 տարվայ թագաւորութեան ընթացքում մի անգամ էր միայն յաղթվել Վիէնայի մօտ<sup>1)</sup>, և հէնց այդ օրից երգվել էր վաղ թէ ուշ սաստիկ պատժել գերմանացիներին:

Հասան վերջապէս սուլթանի ձերութեան օրերը: 1566 թւականին, այն ժամանակ՝ երբ տեղի ունեցաւ այն անցքը, որը մենք պիտի

<sup>1)</sup> Վիէնան այդ ժամանակ գերմանական կայսրութեան մայրաքաղաքն էր:

պատմենք, նա արդէն 70 տարեկան էր:

Տարիքն և անհանգիստ կեանքը սաստիկ ազդել էին նրա վրա. երեսը կնճիռներով ծածկվել էր, ոյժը նուազվել. ձերութեան հասակի տկարութիւնները թուլացրել էին նրա հզօր մարմինը, բայց միտքը, ոգին, դեռ առաջվայ պէս զուարթ էին. և ձերունի սուլթանը կամենում էր կնքել իր փառաւոր կեանքը մի այնպիսի քաջագործութեամբ, որով կարողանար զարմացնել ամբողջ աշխարհը ու յետագայ սերունդը. նա կամենում էր, որ իր գործերի յիշատակը այնպէս անսասան ու փայլուն մնայ, ինչպէս անսասան ու փայլուն է արեգակը...:

Երդումը, որն արել էր ձերունի սուլթանը, երբ գերմանացիները այնպիսի յանդգնութեամբ գիմարեցին մեծ մարգարէի փոխանորդին, հանգստութիւն չէր տալիս նրան:

Սուլթանը մի օր հարցրեց իր անձնական բժշկին, հրէա Լէվիին, թէ

— «Արդեօք քանի՞ տարի դեռ ևս նա կեանք կունենայ»:

Շփոթվեցաւ ձերունի բժիշկը այս անակընկալ հարցումից և մտածութեան մէջ ընկաւ. սակայն զգուշութեամբ և ակնարկներով հասկա-

ցրեց սուլթանին, թէ՛ առողջութիւնը վատացել է, ոյժերը թուլացել են, բայց, և այնպէս, խոստացաւ տասը տարվայ կեանք ևս, եթէ միայն սուլթանը իրան պահպանի, չը յուզվի և հանգիստ անցկացնէ իր կեանքի մնացորդը, վայելելով իր նախորդ յաղթութիւնների փսուքը:

Բայց սուլթանը թոյլ չը տվեց ծերուկ բժիշկին իր շողոքորթիչ խօսքերը շարունակելու:

— Լռիր, ծերուկ, լռիր, բացականչեց նա. դու խոստանում ես ինձ տասը տարվայ կեանք՝ եթէ հանգիստ ապրեմ. բայց, միթէ չը գիտե՞ս դու, որ սուլթան Սիւլէյմանը առանց գործի չէ կարող ապրել. ես սովոր եմ դժուար ու յանդուգն գործերի և չեմ կամենայ կենդանի գերեզման մտնել: Ինձ հարկաւոր չէ տաս տարվայ կեանք և հանգստութիւն. մի տարի միայն կապրեմ ես, բայց այդ մի տարվայ ընթացքում կը զարմացնեմ ամբողջ աշխարհը մի այնպիսի յաղթութեամբ, որի նման մինչև ցայժմ դեռ ևս տեսնված չը լինի: Վիէնայի աւերակների վրայից օրէնքներ կը տամ ապագայ դարերին և իմ հարուածների տակ կընկնի անհաւատ Գերմանիան. թո՛ղ համայն աշխարհ իմանայ, որ Մեծն

Սիւլէյման մեռնում է և թո՛ղ հրդեհված Վիէնան լուսաւորէ իմ ճանապարհը դէպի գերեզման:

Այս ասելով սուլթանը իսկոյն խորհուրդի կանչեց իր բոլոր վեզիրներին և փաշաներին, որոնց հետ նա շատ յաղթութիւններ էր արել, և յայտնեց նրանց Վիէնայի վրա գնալու ցանկութիւնը:

— Արդէն երկու տարի է, որ հռովմայեցոց <sup>1)</sup> Մաքսիմիլիան կայսրը հարկ չէ վճարում. նա տիրել է վերստին Տօկատի ամրոցին՝ որը մի ժամանակ իմ հօգօ իշխանութեանս էր պատկանում. Հունգարիան <sup>2)</sup> չէ ուզում մեր մեծ մարզարէի օրէնքները ճանաչել: Այդքանը միայն բաւական է, որպէս զի առանց այլ ևս մի բոլոր յետաձգելու, գէնք վերցնվի նրանց պատժելու համար...: Այսպէս է ցանկանում ուղղափառների տէրը և ոչ ոք չէ կարող ընդիմանալ նրա հօգօր կամքին... և ամենից առաջ նա կառնի ու կը կործանի Հունգարիայի Սիգիդ բերդը:

Զօրապետները իզուր են աշխատում համոզել սուլթանին, որ չը գնայ այդ բերդի վրա, զի-

1) Այն ժամանակվայ գերմանացոց կայսրը սովում էր և հռովմայեցոց կայսր:

2) Գերմանիայի հարուստիւնն մասը:

տել տարով, որ այդ բերդի պաշտպանողը՝ իշխան Նիկոլա Յրինին է, ուղղափառների ռիւերիմ թշնամին, որը անտարակոյս պատճառ կը լինի շատերի կորստեան:

Ինքնահաւան կայսրը ականջ չէ գնում զօրապետների խոհեմ խորհուրդներին:

—Ո՛չ ոք չէ կարող շեղել ինձ իմ որոշած ճանապարհից, բացականչում է սուլթանը. ինչպէս կարող է մի որևիցէ Յրինի արգելք լինել իմ ցանկութեանս: Պիտի Վիէնա գնանք սուղղակի՝ Սիգիզի վրայով. այս է ահա իմ կամքը:

Սորհուրդը միայն լուսթեամբ պատասխանեց այդ անարկու և սպառնալից խօսքերին. և սուլթանի երկու հարիւր հազարից բաղկացած ահագին բանակը ճանապարհ ընկաւ քրիստոնեաների դէմ ձերուհի տիրոջ համար՝ վերջին փառք, իսկ իրանց համար՝ անուռ ու յաղթանակ աշխատելու:

Ո՛չ այնչափ հեռու Դանուբ գետից, սրբաժանում էր թուրքերի և հունգարացիների հողերը, Դրավա <sup>1)</sup> գետի ափի մօտ, բարձրաւում էր հունգարական Սիգիզ բերդը: Նա շին-

<sup>1)</sup> Դրավա գետը Դանուբի ճիւղն է:

ված էր մասամբ սարի և մասամբ էլ հովիտի վրա. քաղաքը բաժանվում էր երկու մասերի. առաջին մասը հին քաղաքն էր, որտեղ էր նաև ամրոցն ու դղեակը, իսկ երկրորդ մասը նոր քաղաքն էր, ուր անպաշտպան տների մէջ ապրում էին խաղաղակեաց քաղաքացիները:

Այս բերդի հրամանատարը հունգարացի իշխան Նիկոլա Յրինին էր: Նա յայտնի էր իբրև քաջ և հայրենասէր զինուոր. նրա անունը հռչակված էր բազմաթիւ յաղթութիւնների մէջ թուրքերի դէմ, որոնք նոյն իսկ 1566 թւականին սուլթանի հրամանատարութեամբ անցել էին Դանուբ գետը և իրանց հրոսակներով քարուքանդ արել ամբողջ Հունգարիան.

Յրինիի ընտանիքը մեծ չէր. նա ունէր մի որդի, որը ծառայում էր կայսերական զօրաբանակում և մի ջահիլ աղջիկ՝ Հեղինէ անունով, որը իր մօր Եւաի հետ ապրում էր ամրոցում:

Այդ երկու կանայքը, ըստ երևոյթին, շատ քիչ էին իրար նմանում. մայրը, ինչպէս արժանի կողակից կոխներում ձերացած ամուսնուն, երեսայութիւնից սովոր էր պատերազմական



փոթորկալից կեանքի բոլոր վտանգներին, և, իր մարդու պէս, պատիւն ու հաւատարմութիւնը զէպի հայրենիք՝ ամեն բանից վեր էր դասում: Աղջիկը, ծնողների սիրելին, մեծացել էր հայրենական խաղաղ յարկի տակ, մի անպիսի ժամանակ՝ երբ քրիստոնեաների ու մահմէտականների մէջ, դարաւոր անընդհատ կռիւներից յետոյ, առժամանակեայ խաղաղութիւն էր տիրել. մեծացած լինելով գգուանքի և փաղաքշանքի մէջ, նա՝ կարծես թէ ստեղծւած էր միայն ընտանեկան անվրդով, մեղմ ուրախութիւնների համար, որով պիտի բաղդաւորեցնէր այն մարդուն՝ որը կարժանանար նրա կուսական ջերմ սիրոյն:

Այդ մարդը շատ հեռու չէր. և նա, օրիորդը, սիրեց ջահիլ, գեղեցկազէմ Լավրինտի Իւրանիչին, իր հօր քաջ և ամենասիրելի սպային:

Իգուր էր աշխատում Հեղինէն ծածկել իր սէրը. մօր գգայուն սիրտը հասկացաւ աղջկայ գգացմունքները և Եւան ուրախութեամբ պատրաստ էր օրհնել նրանց միութիւնը, բայց բաց-

ւած պատերազմը արգելք եղաւ այդ ամուսնութեան:

Վաղուց արդէն քաղաքացիները նկատել էին, որ ամրոցում ու քաղաքում եռանդուն կերպով պաշտպանութեան պատրաստութիւններ էին տեսնուում. թէ ինչո՞ւ համար էին այդ պատրաստութիւնները, — նրանք չը գիտէին և չէին էլ համարձակուում այդ մասին խօսք բաց անել Յրինիի հետ, որովհետեւ լաւ գիտէին, որ նա չէ սիրում իր պատերազմական գործերի մասին խօսելը:

Մի օր, յանկարծ, նա զինւած՝ բայց սովորականին պէս հանգիստ, մտնում է կանանց սենեակը և յայտնում է իր կնոջ ու աղջկանը, թէ թուրքերի զօրքը արդէն շատ մօտիկ է քաղաքին:

Հեղինէին այդ լուրը սաստիկ վախեցրեց, մայրը խստից հասկացաւ, որ ամրոցին պաշտրումն է սպառնում և, տեսնելով որ ամուսինը եկել է նրանց հանգստացնելու, ասաց նրան.

— Ուղիղն ասա, Յրինի, կարո՞ղ է ամրոցը դիմադրել թէ ոչ: Դու ինձ լաւ ես ճանաչում. ես արդէն արժանի եմ եղել քո վստահութեան,

այդ պատճառով ուզում եմ ճշմարիտն իմանալ: Վստահ եղիր, որ քո կինը վտանգներից վախեցողը չէ: Ես վտանգների սովոր եմ և իմ մէջ այնքան ոյժ կը լինի, որ կարող եմ քեզ նման հերոսի արժանի կին լինել:

— Հանգիստ եղիր, Հեղինէ. քո հայրը և նրա բարեկամները դեռ մեռած չեն. ուստի որևիցէ բանից երկիւղ կրելու պատճառ չունեն:

Եւ ուղիղ որ վտանգը մօտեցել էր: Գիւղացիներից մինը, թշնամուց փախչելով, լուր բերաւ որ սուլթան Սիւլէյմանը անթիւ գործերով ուզգակի Սիգիդի վրա է գալիս:

Իսկ Իւրանիչը նրա ետեից ներս մտնելով, յայանեց, թէ սուլթանը արդէն Դրավան անցել է և ամբողջ երկիրը սրով և հրով ապականում է:

— Տուր ինձ, Յրինի, աւելացրեց Իւրանիչը, մի գունդ քաջ ձիււորներ. սիրտս այրվում է, կամենում եմ կուել. թո՛ղ տուր ինձ այդ շարագործ գազաններից հայրենիքի վրէժը առնել:

Հեղինէի սրտածմլիկ աղաղակը եղաւ երիտասարդի այդ համարձակ խօսքերի միակ պատասխանը:

— Մի ախրի, Հեղինէ, շարունակեց Իւրա-

նիչը, ինձ կուելի դաշտ կտնչողը պատիւն է: Այժմ, միայն այժմ կարող եմ քեզ առաջարկել իմ ձեռքը և համարձակ յայտնել քո հօրը՝ որ քեզ սիրում եմ:

Ես, բացի այս սրից աւել, ոչինչ չունեմ. բայց դու, ծեր զինուոր, շատ անգամ ես ինձ ասել, թէ քաջ մարդը ամենամեծ պատիւների է արժանի, իմ մէջ կայ ոյժ և արիութիւն. թո՛ղ տուր և ես կուելի դաշտում կապացուցանեմ, որ արժանի եմ քո փեսան լինելու:

— Իմ պատասխանը յետոյ կիմանաս, — ասաց Յրինին: Իսկ այժմ ամենից առաւել ինձ հարկաւոր է, քեզ պէս արի զինւորներ ունենալ, որոնց կարողանամ յանձնել Հունգարիաի բազմ...: Վեր առ հազար հետեւակ և հինգ հարիւր հեծելագոր. թո՛ղ քեզ հետ գնան իմ գորսպետներից ամենամուսնները՝ Սլապին ու Հապրուգովիչ, և նրանց հետ միասին դուրս եկ դու Սիւլէյմանի գլխաւոր գորավար Մէհէմէտի դիմաց: Քո գնդի պէս փոքրաթիւ գորքի աջողութիւնը կախած է միայն յարձակման արագութիւնից: Թո՛ղ թուրքերը իմանան, որ Սիգիդը նրանց թւից չը վախեցաւ: Գնացէք, Աստուած

օգնական լինի ձեզ, յաղթանակով վերագարձէք:  
 Հիացմունքով լսում էր երիտասարդ սպան  
 Յրինիի խօսքերը և, երբ նա վերջացրեց, Իւրա-  
 նիչը, դիմելով հարսնացուին, ասաց.

— Մնաս բարև. Հեղինէ, մի մոռանան յիշել  
 ինձ քո աղօթքի մէջ. քո աղօթքը կը պահպանէ  
 ինձ կուրի դաշտում. հաւատացած եղիր, որ ոչ  
 ոք մեզ իրարից չի բաժանի, և ոչ նոյն իսկ մա-  
 հը, եթէ Աստուած ցանկանայ մահ ուղարկել մեզ:  
 Ո՛վ որ սիրա ունի, չէ կարող անգործ մնալ,  
 երբ հայրենիքին վտանգ է սպառնում...:

Այս ասելով նա մերկացրեց սուրը և դուրս  
 եկաւ սենեակից. խեղճ թուրասիրտ առջիկը ան-  
 շընչացած ընկաւ մօր գիրկը, միայն այն իմա-  
 նալով, որ իր սիրելին վտանգի է ենթարկվում...:

Տխուր էր Հեղինէն. ծանր նախագոյացմունք-  
 ները մաշում էին նրա սիրտը. ամեն կողմից  
 նա միայն վտանգներ էր երևակայում իր սիրե-  
 լին համար: Ի բնէ հանգարտ բնութեան տէր  
 լինելով, նա չէր կարող իր մօր պէս աներկիւզ  
 լինել և հաշովել վտանգով և աճով լիքը կեանքի  
 հետ: Հեղինէն կարող էր թանկագին ամու-  
 սին լինել խաղաղ և հանդարտաբարոյ քաղաքա-

ցու համար. նա կարող էր առօրեայ ծանր աշ-  
 խատանքների մէջ նրա համար կատարեալ ու-  
 բախութիւն լինել և որպէս ամենաքնքոյշ մայր՝  
 սնուցանել և մեծացնել նրա մանուկներին, ի-  
 մանալով միմիայն այն՝ ինչ որ կատարվում է  
 իր տան կտուրի տակ և ոչ ինչ զաղափար չու-  
 նենալով այն բոլորի մասին, ինչ որ կատարվում  
 է Աստուծոյ լոյս աշխարհում: Նրա սէրը՝ ետ-  
 կաց սէր էր. ինչպէս որ նա ինքը պատրաստ  
 էր իր ամբողջ կեանքը, սիրտը և միտքը նուր-  
 բել իր մարդուն, նոյնը ցանկանում էր նա և  
 իրանից իր վերաբերութեամբ:

— Դու սիրում ես Լօրէնցօին, միտիթարելով  
 ասում էր նրան մայրը, միայն ոչ ինչպէս հե-  
 րոսի, այլ ինչպէս մի քնքոյշ փեսացուի. դու  
 մոռանում ես, որ ինչքան էլ նա քեզ սիրելու  
 լինի, բայց և այնպէս, նրա համար պատիւը  
 և հայրենիքը աւելի թանգ պէտք է լինի. և  
 ինչքան աւելի մեծ լինի նրա բերած գոճը հայ-  
 րենիքի և պատւի համար, նոյնքան աւելի մեծ  
 լինի նրա անունը և փառքը: Եթէ դու քո ճերտս  
 հօր արժանի աղջիկն ես, եթէ դու կը սիրես  
 Լօրէնցօին այնպէս՝ ինչպէս որ պէտք է սիրէ

Յրինիի նման մարդու աղջիկը, այն ժամանակ  
բեզ կը հրապուրէր ոչ թէ քո փեսացուի երեսի  
գեղեցկութիւնը կամ թէ լեզուի քաղցրութիւնը,  
այլ նրա սրտի վեհանձն գղացմունքները և ա-  
նարատ դիւցազնական պատիւը:

Մինչդեռ մայրը այդպէս մխիթարում էր  
բազան նախագգացմունքներով տանջուող աղջ-  
կանը, այդ ժամանակ բազդը նրա համար պատ-  
րաստում էր մի այնպիսի մխիթարանք, որ սէր  
և ոյժ էր ներշնչում նրա թոյլ հոգուն:

Իւրանիչը, նրա սիրելի Իւրանիչը, որի հա-  
մար տերևի պէս գոգում էր նրա սիրտը, հէնց  
առաջին անգամ թշնամուն պատահելով անմահ  
փառքով պատեց իր սնունը: Իր ջնջին գնդով  
նա գարմանալի անվեհութեամբ յանկարծակի  
յարձակեցաւ Մահմէտի ահագին բանակի վրայ  
և, շփոթեցնելով թշնամուն, չորս հազար մարդ  
կոտորեց, իսկ մնացածներին ի փախուստ դար-  
ձրեց. փախչողներից շատերը, իրանց մեծ զօ-  
րապետի հետ միասին, ընկնելով ձահիճների  
մէջ խեղդվեցան. շատերը գերի ընկան և ամ-  
բողջ բանակը իր բոլոր հարստութիւններով  
աւար մնաց երիտասարդ հերոսին:

Բոլոր ծերունի գինւորները, սպաները և  
մինչև անգամ գերի ընկած թշնամիները գովա-  
բանում էին նրա քաջասրտութիւնը, իսկ Յրի-  
նին, ծերունի գինւորը, արտասուքը երեսին,  
ջերմ կերպով գրկելով երիտասարդ հերոսին,  
ասեց.

—Քո քաջութիւնը միշտ կենդանի կը մնայ  
մայրենի երգերում, ես ինքս անձամբ առաջար-  
կում եմ այժմս քաջիդ այն՝ ինչ որ առաջ մեր-  
ժում էի իմ սիրելի Իւրանիչին. դու իմ աղ-  
ջիկն էիր ուզում, առ նրան, արժանի երիտա-  
սարդ, և բազդաւոր եղիր:

Երջանիկ հայրը արգէն օրհնում էր իր ա-  
ռաջ չողած փեսացուին ու հարսին, երբ յան-  
կարծ դրսից լուեցան նորեկ սուհանդակի փողի  
ձայները: Ամենքը դիմեցին դէպի լուսամուտը և  
տեսան երիտասարդ սուրհանդակ Պետրոս Բի-  
լակիին, որ կայսրի քաջ սպաներից մինն էր.  
մտնելով սենեակը, երիտասարդ սուրհանդակը  
յանձնեց Յրինիին մի ծրար, որը դրօշմած էր  
կայսերական դրօշով:

Կայսրի նամակը մխիթարական չէր. ծե-  
րունի զօրավարը օգնութիւն էր խնդրել, բայց

39572-67



կայսրը միանգամայն մերժում էր. չը նայելով որ բոլոր զօրքը ամեն տեղից արդէն հաւաքվել էր Վիէնա, զգոյշ Մաքսիմիլիանի (այն ժամանակվայ կայսրի) կարծիքով մայրաքաղաքը դեռ ևս բաւականաչափ ապահոված չէր, և այդ պատճառով, նա, Մաքսիմիլիանը, իր յոյսը դնում էր քաջ հունգարացիների հաւատարմութեանը վրա, վստահ լինելով, որ նրանք պատրաստ են մեռնել իրանց հաւատի և հայրենիքի համար:

Աոր մտածմունքների մէջ ընկաւ Յրինին...: Կայսրի միտքը հասկանալի էր. Միգիդ բերդը՝ ինչքան կարելի է, երկար ժամանակ պիտի դիմադրէ՝ թշնամու յարձակման առաջն աննելու համար, որպէսզի կայսերական զօրքը կարողանայ պատրաստվել և բոլոր ոյժերով դիմադրել Սիւլէյմանի հրոսակներին. Միգիդը՝ յայտնի բան է, պիտի վերջապէս կամ ընկնի, կամ անձնատուր լինի թշնամուն: Այսպէս թէ այնպէս, նա պէտք է փրկարար զոհ լինի հայրենիքի համար. և այդ զոհվելու պատիւը կայսրը առաջարկում է իր փորձված, հաւատարիմ ծառային, իշխան Նիկօլա Յրինին, և Յրինին պարծենում է այդ

պատուով: Նա ամեն մի բայէ պատրաստ է իրան զոհ բերել հայրենիքին, բայց ինչ անէ արդեօք նա իր դերդաստան՝ կնոջ, աղջկայ հետ. յայտնի բան է, նրանց իսկոյն պէտք է ուղարկել Վիէնա կայսրի մօտ...: Բայց նկատելով, որ այսպիսով ժողովուրդը կը վհատի, յետաձգեց նրանց Վիէնա ուղարկելը: Միենոյն է...: Թող նրանք էլ մնան...: պարիսպը ամուր է, ժողովուրդը փորձված: Ամբողջ առաջվայ կոխներսում արդէն երկու խիտ պաշարումների դիմացել է: Ծայրայեղ գէպքում զաղտնի անցք կայ, որտեղով նրանք կը կարողանան ժամանակին դուրս գալ. բացի սրանից, ո՞վ է իմանում, գուցէ կնոջ սրտում ևս այնքան ոյժ գտնվի, որ նա կարողանայ անվախ և փառքով մեռնելու...: Ուրեմն թող նրանք էլ մնան այստեղ: Ո՞վ հայրենիք, այս կուտում ես ցոյց կը տամ քեզ իմ բոլոր հաւատարմութիւնը: Ես քեզ զոհ եմ բերում բոլորը, ինչ որ ինձ համար թանգ է՝ աղջկանս և կնոջս...: Աստուծոյ սուրբ հաւատի համար ոչինչ զոհ ծանր չը պիտի լինի մեզ համար:

Յրինիի կարծիքը իր ամուսնու համար սրտաւ չէր: Երբ Բիլակիւր եվայի ներկայութեամբ

խորհուրդ էր տալիս նրան կանանց ուղարկել կայսրի մօտ, Եվան ասաց.

— Ո՛չ, Յրինի, ո՛չ. թո՛յլ տուր ինձ այստեղ մնալ, մի ուղարկիր ինձ մի այնպիսի ժամանակ՝ երբ ամուսնուս գլխին փոթորիկ է հաւաքվում: Կինը պարտական է մասնակից լինել իր ամուսնու վտանգին:

— Բայց, իշխանուհի, խօսքը կտրեց ծերունի Սլապին, մի մոռանաք, որ դուք աղջիկ ունէք:

— Նա ևս պիտի ապացուցէ, որ գիտէ սիրել, պատասխանեց դիւցազնուհի կինը:

Եւ Հեղինէն, այդ առաջվայ թոյլ քնքոյշ և փախկոտ արարածը, այժմ, ոգևորվելով մօր և փեսայի օրինակներից, իր մէջ մի անյայտ ոյժ զգաց ու ասաց.

— Հայր, ազաչում եմ, թո՛յլ տուր մեզ մնալ այստեղ:

Ի դուր էին բոլոր գօրավարների ջանքերը, որոնք յորդորում էին կանանց մի առժամանակ հեռանալ ամրոցից.

Յրինին՝ լուռ կանգնած նայում էր, խոյս տալով կնոջ ու աղջկայ հայեացքներից. արտասուքի կաթիլները փայլում էին նրա աչքերում,

իսկ կանայքը՝ չոգած նրա առաջ, համբուրելով ոտները, ասում էին.

— Թո՛յլ տուր, թո՛յլ տուր մեզ այստեղ մընալ.....:

Յրինին, վերջապէս, այլևս չը կարենալով դսպել իրան, պատասխանեց.

— Այո, դուք կը մնաք:

— Իսկ մենք, եղբայրներս, այժմ դառնանք մեր գործին: Հաւաքեցէք բոլորին հրապարակը, սով որ կարող է դէնք վերցնել, և ես կը յայտնեմ հրապարակով ձեզ այն ժամանակ կայսրի հրամանը և իմ վերջնական որոշումը:

— Իսկ դո՛ւ, ամուսինս, բեր իմ պատերազմական գօտիս և դու ինքդ զգեստաւորիր ինձ արիւնսայեղ ինչոյքի համար.....օրհասական րօպէն հասել է.....:

Սիգիլի հրապարակը լի էր գինւած ժողովուրդով. քաղաքի դռները փակւած էին և բոլոր թնդանօթները շարված պարիսպներին վրա: Աշտարակի պահապանը վաղուց էր իմաց տվել, որ հեռում թուրքերի ամբողջ խումբեր են երևացել: Հունգարական հինգ գիւղեր, որոնք շրջապատում էին քաղաքը, այրւում էին...

Թշնամիները յարձակումը մօտենում էր: Ամբոխը յուզված սպասում էր իր ծեր գլխաւորին: Սպաները միմեանց պատմում էին նրա մասին, որ ոչ մի ժամանակ իշխանին այսպէս հանդարտ և անխռով չէին տեսած: Վերջապէս անհանձնաբարձ ընկալեց իր խոսքը և ժողովուրդը կարծես թէ քարացել էին. հազարաւոր աչքեր ուղղված էին դէպի նա: Նրա աչքերը վառվում էին հրաշալի բոցերով: Նրան ոգևորողը կուրծքով ծառար չէր, այլ այն վճիռը՝ որով նա գիտակցաբար իր կեանքը հայրենիքին գոհ էր բերում: Հանգիստ սպասում է գալու վտանգներին, որոնց առաջին օրինակները տեսնում էր նա մօտակայ այրվող գիւղերի ծխի և արիւնափայլ լոյսի մէջ: Նրա այդ դիւցազնական անխռովութիւնը ազդում է նաև նրան շրջապատող բոլոր գործի և ամբոխի վրա. և վերջապէս, իշխան Նիկոլա Յրինին ըսկսեց խօսել գործին հետ այսպէս.

«Զօրականներ.

«Դուք, որ այստեղ ժողովված էք, ականջ դրէք ձեր մեծաւորի խօսքերին:

«Թուրքերի սուլթանը անագին գործով գալիս է Սիգիդի վրա. նա սպառնում է կործանել

և փշացնել մեր բերդը. եղբայրներ գինւորվենք քաջութեամբ. մեր արիւնակից եղբայրները դեռ ևս պատրաստ չեն թշնամու առաջը դուրս գալու և այդ պատճառով չեն կարող մեզ օգնութիւն հասցնել շուտով. բայց նրանք յոյս ունեն, որ հաւատի, հայրենիքի և ազատութեան համար, մենք մեր կեանքը չենք խնայի և մեր սուրբ եկեղեցին անհաւաստների ձեռքը չենք տայ: Թշնամու ոյժը մեզ համար երկիւղալի չէ. նրանց գործի բազմութիւնը թող չը վախեցնէ մեր աչքերը. մտաբերեցէք, որ ինչքան էլ մեծ լինի ծովը, բայց և այնպէս նա չէ կարող ամուր ժայռը տեղիցը շարժել. մի վախենաք թշնամու բանակից. մեր կողմին են Աստուածը և նրա սուրբ հրեշտակները. ամբողջ քրիստոնէութիւնը երկիւղով և յուսով նայում է. մեզ, Աստուծոյ ընտրեալներիս վրա, և ազօթում է, որ ամենակարողը օգնէ մեզ յաղթել մեր թշնամիներին. ուրեմն, անվախ գնանք պատերազմ և համարձակ մեռնենք կուրծք գաշտում. եթէ Աստուծոյ կամքը այնպէս է, որ ես պիտի ձեզանից առաջ մեռնեմ, այն ժամանակ թող իմ տեղս բռնէ իմ հաւատարիմ բարեկամ և ընկերակից Սլապին.

հնազանդվեցէք նրան այնպէս՝ ինչպէս հնազանդվում էիք ինձ:

«Այժմ լսեցէք նաև իմ, գուցէ, վերջին կամքը»:

«Ո՛վ որ իր մեծի հպատակութիւնից դուրս գայ, նա մահվան պատժի պիտի ենթարկվի, ով որ մի բօպէ անգամ, առանց հրամանի, իրան նշանակված տեղից կը հեռանայ, նա առանց դատաստանի պիտի մեռնի. ով որ թուրքերից նամակ կը ստանայ, նա մասնիչ է,—այդպիսիներին կրակում այրեցէք իսկ նամակը, առանց կարգալու, թուրքերին ձգեցէք. եթէ երկուսը երեքը ձեզանից, վախից գաղտնի հաւաքվելով մի տեղ, կը սկսեն իրար հետ փոփոխալ, այդպիսիներին կախեցէ՛ք. մեր մէջ գաղտնիք չը պիտի լինեն. քաղաքի դրան վրա մի մեծ ծիրանի խաչ կանգնեցրէ՛ք, իբրև նշան մեր քրիստոնէական հաւատի. թո՛ղ թուրքերը իմանան թէ մենք ինչո՞ւ համար ենք կոռում ու մեռնում: Իսկ անհ ես՝ իբրև ձեր առաջին հրամանատարը, ծոնկ եմ չոգում Աստուծոյ առաջ և երգվում եմ հաւատարիմ մնալ ուխտիս. դ՛ուք ևս նոյնպէս երգվեցէ՛ք»:

Այս խօսքերը արտասանելով, նա դուրս եկաւ առաջ և ընկնելով ծնկան վրա, շարունակեց.

«Ես, իշխան Յրինի, երգվում եմ Աստուծոյ առաջ մինչև իմ վերջին շունչը հաւատարիմ մնալ հայրենիքին և մեր լոյս հաւատին. թո՛ղ նզովված լինեմ ես իմ վերջին մահվան ժամում, եթէ դաւաճանեմ մեր եղբայրական ուխտին և ընկեր չը լինեմ ձեզ, իմ հաւատարիմ հունգարացի եղբայրներս, թէ յաղթութիւնների և թէ մահուան մէջ: Օ՛ն ուրեմն, դ՛ուք ևս երգվեցէ՛ք ձեր սրբի վրա»:

Բոլոր գօրքը, ինչպէս մի մարդ, ծոնկ չոգեց. և չորս գլխաւոր գգօրապետներն, ի նշան երգման, իրենց սրերը դնելով Յրինիի ոտների վրա, բացականչեցին.

«Երգվում ենք՝ Աստուծոյ և քո առաջ, հաւատարիմ լինել օրէնքին, հայրենիքին ու հաւատին և անտրտունջ հնազանդվել քո բոլոր հրամաններին»:

Բոլոր գօրքը և ամբոխը կրկնեցին նոյն երգումը, հաստատ հաւատալով, որ կամ կը յաղթեն այս աշխարհում, և կամ մարտիրոսական



պսակ կը ստանան միւս աշխարհում:  
Գիշերվայ խաւարը արդէն տիրել էր, բայց ոչ սովորականի պէս խաւարը, այլ ծիրանի, որ կարմրատակում էր այրվող գիւղերի լուսից և լուսաւորում էր ազօթող զինւորներին և նրանց սուրբերը:

1556 թւականին, օգոստոսի 7-ին, սկսեց Սիգիգի պաշարումը: Թուրքերի գլխաւոր նպատակն էր անպատճառ բերդը առնել, որից յետոյ նրանք կարող էին ուղղակի գնալ Վիէնայի վրա և մինչև կայսրի իր բոլոր զօրքերը ժողովելը՝ տիրել նրան: Բայց Սիգիգի առնելը նրանց կարծածից շատ աւելի դժուար էր: Թէև թուրքերը՝ թւով շատ էին և կովում էին զարմանալի քաջութեամբ, բայց միշտ նրանք իրանց յարձակումների ժամանակ, դեռ ևս քաղաքի պարիսպներին չը հասած, ստիպված էին լինում յետ քաշվել: Դեռ այդ բաւական չէր. քաջ հունգարացիները ստէպ-ստէպ դուրս էին գալիս և բաց դաշտի վրա, անսպասելի արագութեամբ և քաջութեամբ յարձակվելով թշնամու վրա, անխնայ ջարդում և կոտորում էին նրանցից շատերին:

Սիգիգը ամուր կանգնած էր ինչպէս մի ժայռ՝

որին զարնվում էին թշնամու հրոսակները իրանց բոլոր ոյժերով՝ որպէս ծովու ալիքներ: Նրանց զօրապետները արդէն սկսել էին լքանել, սուլթանը՝ որ չէր սպասում մի այդպիսի անակնուշիկ դիմադրութեան իր անյաղթ զօրքերի դէմ, և այն էլ մի այդպիսի փոքրիկ ու չնչին բերդից, ունքերը քաշ էր արել և բարկութիւնից ճաթում էր: Անյաղթ սուլթանի ինքնասիրութիւնը սաստիկ վրդովված էր...: Վերջապէս նա, գիշանելով իր զօրապետներին ողիւրջին, համաձայնվեց առ այժմ թողնել բերդի վրա յարձակման շարունակութիւնը, մինչև որ մանրամասն տեղեկութիւններ չի հաւաքի գերի ընկած հունգարացի սպայից բերդի ոյժերի և միջոցների մասին:

Այդ սպան՝ քաջ Բիլակլինն էր: Կուրի ժամանակ եէնիչէրինների թրով սաստիկ վիրաւորված, արիւնաքամ, ուշաթափվել, գերի էր ընկել նա, և այժմ՝ գլուխը կտպած, պահապաններով շրջապատված, կանգնած էր մարդարէի փոխանորդի ասաջ:

— Ասան ինձ, երիտասարդ, ո՞վ ես դու, հարցրեց նրան ուղղափառների հրամանատարը:

— Ես հունգարացի եմ և քրիստոնեայ, ուրեմն քեզ երկուպատիկ աւելի ատելի մարդ:

— Ես մարդկանց առանձին առանձին չեմ ատում. Սիւլէյմանը չէ շոկում իր ծովերի կաթիլները միմիանցից. իմ բարկութիւնս թափում եմ միայն ամբողջ ազգերի վրա. ասանձ, ի՞նչ դրութեան մէջ է այժմ Սիգիդը:

— Երբ կը տիրես նրան՝ այն ժամանակ և ինքդ կիմանաս բոլորը:

— Շուն, սարսուկ, բացականչեց ոռլթանի մերձաւորներից մէկը. ի՞նչպէս ես համարձակվում քո տիրոջը այդպէս պատասխանել:

— Շատ կարելի է, որ դու լինես նրա սարսուկը, խօսքը ընդմիջեց երիտասարդը, բայց ես՝ երբէք: Ազատ հունգարացիները խոնարհվում են միմիայն ամենակարող Աստուծոյ և իրենց արքայի առաջ:

Գերիի համարձակ խօսքերը շատ դուր եկան Սիւլէյմանին և նա՝ քաջ հասկանալով նրա գերազանցութիւնը, շարունակեց հարցովփորձանել Բիլակիին բերդի դրութեան մասին. բայց գերին վերջ տվեց սուլթանի խօսքերին, ասելով.

— Խորհուրդ եմ տալիս, քեզ, սուլթան, ասեց նա, թողնել Սիգիդը: Այս պարիսպների տակ դու կը կորցնես քո բաղդը. ամուր ուժի առաջ քո խմբերը չեն դիմանալ. Սիգիդում մերոնք, ճշմարիտ է, թւով քիչ են բայց քո երեք հարիւր հազարդ անգամ չի հաւասարվի իմ մի բուն հայրենակիցներին հետ: Բոլոր հունգարացիները գիտեն իրանց երկրի ու հաւատի համար մեռնելը. նրանք թուրքերի պէս՝ կատաղի զարոյթի ժամանակ չեն միայն մեռնում, այլ մեռնում են սառնասիրտ, համարձակ ու հանգիստ...

— Եւ նրանք բոլորը կը փչանան, բացականչեց սուլթանը, կը փչանան, ինչպէս փչանում է յանդուգն լուղորդը ծովի ալիքներում, և նրանց հետ յաւիտեանս յաւիտենից կը մեռնի նաև նրանց յիշատակը:

— Ո՛չ, սուլթան, նրանց յիշատակը չի մեռնի, ընդհատեց նրան համարձակ գերին. նրանց յիշատակը, ինչպէս յաւիտենական մշտակայ լուսատուն, իր փառքի ճառագայթներով կը լուսաւորէ շատ երկար տարիներ յետագայ սերունդները: Դո՛ւ մեծ ես, Սիւլէյման, քո յաղթու-

թիւնների փառքով՝ բայց իմացած եղիր դու, երևելի գորավար, հազարաւոր մարդկանց կեանք խաւարող, որ աւելի մեծագործութիւն է մեռնել հայրենիքի, հաւատի համար և իր մահով փրկել հայրենակիցներին ստրկական նախատալից շղթաներից. քեզ, սուլթան, յետագայ սերունդը կը դատէ, ինչպէս հարստահարիչի, և անէծքով կը դատապարտէ. նայիր, քո ստրուկները դողում են արգէն. իսկ ես՝ թշուառ գերիս, համարձակվում եմ այսպիսի սարսափելի խօսքերը սուլթանի երեսին ասել. այո, Սիւլէյման, կրկնում եմ, քեզ կը դատապարտէ յետագայ սերունդը, որովհետև դու փառքի հասել ես, ամբողջ ժողովուրդներ կռտրելով և հարիւրաւոր քաղաքներ ու գիւղեր այրելով՝ կանչիր քո դահիճներին և ինձ նրանց ձեռքը տուր. ես քո առաջ ասացի այն՝ ինչ որ չէր համարձակվել ասել քեզ մինչ օրս ո՛չ որ...

Բայց սուլթանը չը կանչեց դահիճներին. դունաթափ, ինչպէս մեռեալ, պոօշները բարկութիւնից դողողացնելով նստած էր նա, խոր մտածմանց մէջ ընկզմվելով. նրա աչևոր գլուխը ժամանակ առ ժամանակ տատանվում էր և աչ-

քերը յամառութեամբ նայում էին գեանին: Բոլոր շրջապատողները սարսափից լուր էին. նրանք դողում էին իրանց տեղակալի մինչև այժմս չը տեսնված գարնուրելի դէմքից. միայն նա՝ այդ գրեթէ երեխայ հունգարացի գերին, անվախ կանգնած մարդարէի սոսկալի փոխանորդի առաջ, ուղիղ նայում էր նրան և սպասում էր մահի:

Երկար անեց այդ ծանր լուրթիւնը. վերջապէմ Սիւլէյմանը աչքը զցեց գերու վրա ու սասց.

— Քրիստոնեայ դու ազատ ես. լուսնի ինչ գործն է, թէ շունը նրա վրա հաչում է. ես քեզ կեանք եմ բախշում. նա թանգ է միայն ինձ պէս մեծ մարդկանց համար. գնա...:

Բայց քրիստոնեայ գերին մուռլման արքային նուէր չը կամեցաւ ընդունել:

— Չեմ ցանկանայ այն կեանքը, բացականչեց Բիլակին, որ արհամարելով ես ինձ նուիրում. դու պիտի ինձ պատվես, սուլթան, կամ թէ սպանես:

— Քրիստոնեայ, ընդհատեց նրան սուլթանը,

ես վաղուց է, որ մոռացել եմ մարդկանց յարգելը:

— Ուրեմն սովորի՛ յարգել նրանց այժմ, բացականչեց գերին՝ գլխից պոկելով փաթիթը. թշնամու գթութիւնը չեմ ընդունում. թող հոսի իմ արիւնը այստեղ թէ կուրի դաշտում, — ինձ համար միկնոյնն է. այսպէս թէ այնպէս ես հայրենիքի ու հաւատի համար եմ մեռնում ուրեմն թող կեցցէ՛ իմ կայսրը և թող փշանան նրա թշնամիները: Եւ այս խօսքերով արիւնաքամ երիտասարդը անկենդան ընկաւ սուլթանի ոտերի առաջ:

Այս անակնուկների գէպքի առիթով սուլթանը չը կարողանալով իրան գսպել, բացականչեց «Բաղդաւոր է քո հայրենիքը՝ եթէ քեզ պէս որդիներ շատ ունի», — և հրամայեց, որ դուրս տաներ մարմինը:

Շփոթվեց սուլթանը. այդպիսի յանդուգն ընդիմադրութիւն նա չէր սպասում գերվածի կողմից. իմացաւ այդպիսով քարասիրտ բռնակալը, որ կան մարդիկ՝ որոնց մեզանից ամեն մէկը պէտք է յարգէ: Չը կամեցաւ նոյնպէս սուլթանն ի զուր ժամանակ կորցնել այդպիսի

չնչին բերդը պաշարելու համար. նա դրա համար չէր իր կեանքի վերջում սկսել այս պատերազմը, որով ուզում էր աշխարհ գարմացնել: Որպէս զի Միգիդը նուաճի, նա իր գլխաւոր վէզիր ու զինակից Մանմէդին կանչելով իրան մօտ, հրամայեց նրան իշխան Յրինիի հետ հաշտութեան բանակցութիւն սկսել:

— Ասա՛ նրան, ասաց սուլթանը, որ ընդիմութիւնը անօգուտ է. թող նա իր կամքով բերդը ինձ յանձնի և ես սալիս եմ նրան ի սեպհականութիւն՝ ամբողջ Խորուսթիան և այնքան գանձ՝ ինչքան նա կը կամենայ. նա կը լինի իմ բարեկամը և դաշնակիցը. իսկ եթէ չի համաձայնվի, այն ժամանակ բերդը առնելուց յետոյ, մենք բոլորին էլ կը կոտորենք, ո՛չ որի չենք խնայի, ո՛չ ծերերին և ո՛չ մանուկներին. մեր ծառաների բռնաբարութեանը կենթարկենք նրա կնոջը, աղջկանը...: Իսկ եթէ այդ ժամանակ ևս չը համաձայնվի, ասա՛, որ նրա միակ սիրելի որդին գերի է բռնված մեզ մօտ. և եթէ Յրինին նոյն բազէին բերդը չը յանձնի մեզ, ես նրա որդու համար այնպիսի տանջանքներ կը հնարեմ, որոնք գեռ ևս աշխարհումս

ГОС.  
Публичная  
Б-ка в  
Ленинграде.

տեսնված չեն լինի: Գնա՛ւ և առաջարկիր այն գոռողին, և թո՛ղ երկուսից մէկը ընտրի՛. կամ լինել խրուածիների թագաւոր կամ թէ՛ տեսնել իր որդու մարմինը պատառոտված...: Եթէ այն ժամանակ ևս չը համաձայնվի բերդը տալ, այն ժամանակ և միայն այն ժամանակ, ես կը խոստովանվեմ թէ մինչև այժմ մարդկանց չեմ ձանաչել:

Մինչ այս մինչ այն ամբողջ Սիրիոյ քաղաքը համարեա թէ քանդվել էլ պաշարուածից. հին պարիսպները երկար չէին կարող դիմանալ այլ ևս թուրքերի դնդակներին. ամեն բոպէ կարելի էր սպասել, որ ահա պատերը կը թափվեն և, թուրքերը մտնելով քաղաք, կը սկսեն կոտորել խաղաղ բնակիչներին. ամուր էր միայն բերդը իշխանական ամրոցով: Այդ աչքի առաջ ունենալով, իշխանը հրամայեց բնակիչներին տեղափոխել իրանց ունեցած-չունեցածը այդ բերդը, իսկ քաղաքը այրել, որ թշնամու ձեռքը չընկնի: Ծանր էր ձեռքերի իշխանին իր ձեռքով ոչնչացնել այն քաղաքը՝ որը այնպիսի հոգացողութեամբ նա ինքը շէնացրել էր՝ իր սիրելի ժողովուրդի բարօրութեան համար. բայց վտանգը

մօտ է և ալետր Սլապին արդէն հրամայում է նախապէս ամեն տեղ կրակ և ձիւթ պատրաստել, որպէս զի իշխանի նշանով միաժամանակ ամեն կողմից կրակ տրվի քաղաքը:

Կանգնած է իշխանը լուսամուտի առաջ. նայում է վերջին անգամ իր ձեռակերտի վրա. շատ ժամանակ չէր անցել այն օրից՝ երբ նա ծաղկած դրութեան մէջ էր. իսկ այժմ... նայում է իշխանը և մէկը միւսի ետևից արտասուքի կաթիլները գլորվում են նրա խոփոտ աչքերից...

Իսկ սուլթանի դեսպան Մահմէդը, որը արդէն հասել էր բերդը, մտնում է իշխանի մօտ և խոստանում է սուլթանի անունով հազարաւոր բարիքներ, միայն թէ նա բերդը յանձնի թուրքերին:

Հանգիստ լսում է Յրինին Մահմէդի խօսքերը և պատասխանում է, ինչպէս վայել է քաջին:

— Ես Յրինին եմ. ահա իմ պատասխանը սուլթանին: Եթէ նա ինձ յարգում է, ինչո՞ւ է ինձանից մատնութիւն պահանջում. թո՛ղ ամրոցը ուժով առնի և յետոյ՝ ինչ որ ուզում է, անի. իսկ ես կը կատարեմ այն՝ ինչ որ իմ պատուի

զգացմունքը և պարտքը ինձ պատուիրում են: Մահմէղը, որը դիտամամբ ծածկում էր մինչև այժմ, պատմեց թէ ինչ է սպասում իշխանի կնոջ ու աղջկանը, եթէ նա չը համաձայնվի անձնատուր լինել: Բայց իշխանը անողորմելի էր:

— Խեղճ թուրք, ընդհատեց նա Մահմէղին՝ դու դեռ ևս մեր կանանց վեհութիւնը չես իմանում, նրանք գիտեն իր ժամանակին մեռնելը:

Այն ժամանակ, Մահմէղը՝ տեսնելով որ ծերունուն չէ՛ գրաւում ո՛չ թագը և չէ՛ վախեցնում ո՛չ կնոջ և ո՛չ աղջկայ մահը, պատմեց գերի ընկած արդու մասին և ինչ որ նրան սպասում էր:

Ծերունին ձեռքերով երեսը ծածկեց և նրա շրթունքներից դուրս թոսն այս խօսքերը:

«Ի՛մ որդի, իմ Գէորգ... սով Տէր Աստուած իմ, դժո՞ն է քո բաժակը...»:

Չը՛, համաձայնվում ևս որդուդ մահին, ասաց Մահմէար, կարծելով թէ վերջապէս յաղթեց իշխանին:

— Ես վաղուց ամենը վճռել եմ... հայրենիքիս ևս չեմ զաւաճանի. չարչարեցէք, սպանեցէք,

կտոր կտոր արէք նրան... Գէորգը իմ որդին է, բայց նա պատուով կը մեռնի...:

Եւ այս խօսքերը արտասանելով, դիմեց նա դէպի դուռը ու բացականչեց.

— Կրակ տվէք նոր քաղաքը, թո՛ղ այրվի. Եվան, բարեկամներ, բողոքեքեանդ եկէք այստեղ:

Եւ վէզիբի առաջ դուրս եկան իշխանի կինը, աղջիկը և հունգարացի զօրավարները, որոնք հարևան սենեակում սպասում էին բանակցութեան ելքին:

Յրինին՝ մի արտասովոր ոգևորութեան փայլը երեսին, դիմեց դէպի նրանց.

— Բարեկամներ, դուք ինքներդ պատասխանեցէք այս թուրքին, որը համարձակվում է առաջարկել մեզ մասնիչ լինել. միթէ մենք մեր կամքով Աստուծոյ առաջ չերգուեցի՞նք մեռնել մեր սուրբ հայրենիքի համար:

Բոլոր զօրավարները միաձայն բացականչեցին՝ — այո, մեր կամքով:

Իսկ դո՛ւք, կաննայք, պատրաստ էք մեռնելու ձեր պատւի և սուրբ հաւատի համար:

— Ես ուրախութեամբ գերեզման կը մտնեմ քեզ հետ, ասաց Եվան:

— Զինուորի հարսին՝ մահը չէ կարող սարսափեցնել, — ասաց Հեղինէն:

Եւ Յրինին գրկեց կնոջն ու աղչկանք:

Այդ ժամանակ քաղաքը արդէն այրվում էր և հրդեհի ճառագայթները լուսաւորել էին թէ պատուհանները, թէ այդ ապշած և հիացած պատգամաւորին և թէ դիւցազներին և դիւցազնուհիներին, որոնք պատրաստ էին ուրախութեամբ մեռնել հայրենիքի համար:

— Այժմ, վեզիւր, ասա ծեր իշխանը, կարող ես յայտնել սուլթանց, թէ ինչ է մտածում Յրինին: Ասա, որ բոլորը ժողովրդը նրա հետ համաձայն է, բայց մինչև դուլթանի բանակի յետ դառնալը այդ այրվող քաղաքը կը յայտնէ նրան, թէ Յրինին՝ մահը նախատինքից գերադաս է համարում, թէ նրա համար աւելի թանգ է պատիւը՝ քան թէ աշխարհի բոլոր հարստութիւնները, թէ հայրենիքը աւելի թանգ է նրա համար՝ քան թէ մինչև անգամ նրա միակ որդին. այժմ եկէք և մենք պատրաստ ենք ձեզ ընդունելու, մեզանից ոչ ոք

կենդանի ձեր ձեռքը չի ընկնի, շղթաները մեզ չեն ծանրաբեռնի և այս աւերակները մեզ գերեզման կը լինեն...:

Այսպէս պատասխանեց իշխան Նիկոլա Յրինի սուլթանի մեծ դեսպանին:

Սուլթանին սաստիկ ապշեցրեց թէ Յրինիի պատասխանը և թէ այրվող քաղաքը, որը պարզ ցոյց էր տալիս, որ պաշարվածները վճռել են մինչև արեան վերջին կաթիլը ընդդիմադրել թշնամուն:

Բայց Մահմէդի բերած լուրը միանգամայն խանգարեց 70 տարեկան, առանց այն էլ, տկար, գառամեալ ծերունու առողջութիւնը. սաստիկ յուզված, տենդային կրակով փայլող աչքերը արիւնով լցված, շնչասպառ ձայնով նա հրամայեց նորից յարձակումն անել Սիզիլի վրա: Բայց այդ երկրորդ յարձակումն ևս չը աջողվեց. չաջողվեցան և երրորդ, և չորրորդ, և հինգերորդ յարձակումները: Վերջապէս նոր քաղաքի պարիսպը պայթեցրին: Այն ժամանակ Յրինին փակվեցաւ ամրոցում. բայց, և այնպէս, դարձեալ անհնար եղաւ տիրել քաղաքին:

Այսպէս ի դուր տեղն ամբողջ ամիս շա-  
րունակվում էր պաշարումը:

Սպառվեց սուլթանի վերջին ոյժը, մաշ-  
վեց նրա կեանքը: Հրամայեց նա բոլոր սպան-  
վածներին համարել. պատերազմի դաշտում գտան  
միայն հինգ հարիւր հունգարացու դիակներ,  
իսկ թուրքերից արդէն կոտորվել էր մի քանի  
հազար: Այդ ամենը այնպէս ազդեցին սուլթանի  
վրա, որ բոլորովին յոյս չը կար թէ նա կապրի  
և օրէջօր սպասում էին նրա մահին. բայց և  
այնպէս, թէև հազիւ կենդանի, նա կատարի  
յուսահատութեամբ կովում էր մահուան դէմ և  
դեռ ևս յոյս ունէր իր փառաւոր կեանքի վեր-  
ջին րօպէները պսակել պանծալի յաղթութեամբ.  
Թոյլ ձայնով նա դեռ ևս հրամաններ էր տալիս  
աւելի և աւելի սաստիկ յարձակումներ անել Սի-  
զիդի վրա: Հրամայեց գլխատել մի քանի վե-  
զիրներին, որոնք՝ իբր թէ մեղաւոր էին սուլթանի  
առաջ այդ անյաջողութիւնների համար. այդ-  
պիսով նա իր վերջին րօպէները թոռնաւորում  
էր իր հաւատարիմ ծառաների արիւնով:

Սակայն մահը արդէն մօտ էր. մինչև այժմ,  
որը իր բոլոր ազգի համար բաղդաւոր օր էր

համարված, նա լուր է ստանում, թէ սուլթանի  
գօրքերը՝ թուլանալով վերջապէս շնորհով բաղ-  
մաթիւ անհետեանք յարձակումների, փախան  
պատերազմի դաշտից, թէ սուլթանի դաշնակից  
Եգիպտոսի փաշան ընկաւ պատերազմի դաշտում,  
և թէ մահը ամեն տեղ կոտորում է թուրքերին.  
մի խօսքով, մինչև այդ ժամանակ բաղդաւոր  
համարված թիւրքիայի անյաղթ և ահարկու տե-  
ղակալը ամօթալէ կերպով յաղթված էր: Քաջի  
սիրտը չը դիմացաւ այդ վերջին հարուածին.  
հաւաքելով իր վերջին ոյժերը, նա գոռաց այդ  
սոսկալի լուրը բերող վեզիրի վրա և հրամա-  
յեց, որ նորից յարձակումն անեն. և երբ վե-  
զիրը ուղղակի յայտնեց թէ գօրքերը չեն կամե-  
նում մէկէլ յարձակումն գործել, սուլթանը դա-  
շոյնը խրեց նրա կուրծքը և ինքը, բարկութիւնից  
թուլացած՝ հառաչելով վայր ընկաւ ու մի քա-  
նի րօպէից յետոյ նա արդէն մեռած էր:

Երեք վեզիրների, սուլթանի մահվան միակ  
վկանների, առաջ՝ այժմ, ընկած էր չարութիւնից  
և մահուան չարչարանքներից այլանդակված դի-  
ակը, որից մի քանի ժամ առաջ ամբողջ աշ-  
խարհը գողում էր: Սուլթանը այլ ևս չը կար,



բայց նրա ահարկու ոգին դեռ ևս թագաւորում էր ամբողջ զօրքի վրա. և ահա վէզիրները վճռեցին՝ ծածկել զօրքից Սիւլէյմանի մահը, որպէս զի նրանց սիրտը չը լքանի: Գաղանի կերպով դեսպաններ ուղարկեցին Կ. Պօլիս թագաժառանգի մօտ. հազցրին դիակը թանկագին շորեր, օծեցին անուշահոտ իւղերով և, սուրը ձեռքը տված, մութ ժամանակ հեռուից ցոյց տուին անկենդան մարմինը այնպէս՝ որպէս թէ կենդանի է և գահի վրա է նստած: Ապստամբված և խաբված զօրքը սարսափեց իրա տիրոջից և գնաց վերջին յարձակումը գործելու:

Հին ամրոցին, հունգարական վերջին պատուպարանի, մօտալուտ կորուստը, որտեղ փակվել էր Յրինին իր գերդաստանով և մի բռուն քաջերով, միանգամայն անխուսափելի էր: Իր և ընկերների մասին Յրինին արդէն վճռել էր՝ նրանք բոլորեքեանն էլ կը մեռնեն, բայց կենդանի թշնամու ձեռքը չեն ընկնի, իսկ կանանց մասին նա դեռ ևս տատանվում էր: Նա թագացրեց նրանց նկուղում. բայց պաշար հազիւ մի քանի օրվայ համար էր մնացած, այն էլ միայն կանանց համար. բացի սրանից, երբ ամրոցը

բանդվէր թուրքերի գնդակների հարուածներից. այդ ապաստանարանն ևս անպատճառ պիտի յայտնվէր թշնամիներին. այդ պատճառով վճռեց վրկել Յրինին իր կնոջը և աղջկանը:

Ծերունի Ջերնիկը, նրա մանկութեան դաստիարակը, գտել էր մի ստորերկեայ անցք, որը այդ նկուղից տանում էր դէպի լիճը:

Էգոց, լուսաբացին, ասաց Յրինին կանանց, դուք այստեղից դուրս կը գաք. լճից մինչև անտառը հազիւ թէ երկու հարիւր քայլ լինի. իսկ այնուհետև շտապեցէք գաղանի ճանապարհներով կայսերական բանակը և հաղորդեցէք կայսրին, որ Յրինին ընկաւ, ինչպէս իր հայրենիքին հաւատարիմ որդի, ու Սիգիդի աւերակներում փառաւոր գերեզման գտաւ: Հանգիստ եղէք, ես ամեն բան կը պատրաստեմ,—Իւրանիչը, իմ Հեղինէիս փեսացուն, ձեր ուղեցոյցը կը լինի:

Բայց Իւրանիչը, որը իշխանի հետ այդտեղ ներկայ էր, ընդհատեց նրան, ասելով:

—Դո՛ւ, Յրինի, ասաց նա, դաստիարակել ես ինձ դո՛ւ ես սովորեցրել ինձ սուր ու սուրբ գործածել, դո՛ւ ես արմատացրել իմ մէջ պատուի ու պարտաճանաչութեան զգացմունքները,

դո՛ւ վերջապէս, ինձ կնութեան ես տալիս քո աղջիկը, քո անգին գանձը, — և դո՛ւ ինքդ ստիպում ես ինձ նախատալից յանցանք գործել. ո՛չ, չես կարող բաժանել քո որդուն ամենաքաղցր երջանկութիւնից— հայրենիքի համար փառաւոր մահից. ո՛չ, հայր, ես զինւոր եմ, ես երգվել եմ, հաստատ մնալ իմ դրօշակին և ես պիտի մեռնեմ քեզ հետ:

— Ազնիւ երիտասարդ, գու իմ որդին ես, ուղիղ է, բայց, այնու ամենայնիւ, գու նրանց պիտի ուղեկցես.... նայիր, այդ խեղճ արտասովոր աղջկան, նա քո հարսն է.... նա քեզանից սէր է խնդրում.... ապրիր, որդիս, և բաղդաւորացնւր նրան, որը իր սիրտը քեզ է նուիրել:

— Այո, ես նրան բաշխել եմ իմ սիրտը, բայց հայրենիքիս տվել եմ իմ պատիւը. այդ վերջին պարտքը՝ ես ամեն բանից առաջ պիտի վճարեմ. իմ հոգիս, իմ միտքս, իմ բոլոր զգացմունքներս նուիրված են քեզ, իմ Հեղինէ, բայց իմ կեանքը պատկանում է այժմ հայրենիքին. ես այնտեղ՝ միւս աշխարհում յաւիտեան քոնր կը լինեմ, բայց այստեղ՝ այս աշխարհում ես պարտաւոր եմ ծառայելու իմ պարտաճանաչութեան և երգման: Փախէք առանց ինձ. մտաբերեցէք ինձ այն րօպէներին՝ երբ ձեր

կսկիծը կը մեղմանայ և մի կաթիլ արտասուք նուիրեցէք այն մարդու յիշատակին՝ որը ձեզ այնպէս անկեղծ ու կաթոգին սիրով սիրել է... Դուք լաց էք լինում.... ես ձեզ վերաւորեցի.... սո՛հ, հաւատացիր, Հեղինէ, որ ես քեզ նոյնպէս սաստիկ եմ սիրում, ինչպէս և դու, և դրա համար էլ հէնց կեանքս զոհում եմ....

Բայց կանայքը ահանջ չը դրեցին ո՛չ Յրինիրն ո՛չ Իւրանիչին, հաստատ մնալով իրանց վճռին. նրանք նորից սկսեցին աղաչել իշխանին, որ թոյլ տայ մեռնել հայրենիքի համար, նրանց հետ միասին՝ որոնք իրենց համար այնքան թանգ են և առանց որոնց՝ կեանքը ոչինչ ուրախութիւն չէ խոստանում.... Նրանց խնդիրքները մերժող Իւրանիչը այժմ հպարտութեամբ տեսնում էր թէ սրբան հոգեկան ոյժ է թագնված այդ աղջկան մէջ, որին նա մինչև այժմ համարում էր միայն ընդունակ ընտանեական կեանքի խաղաղ ուրախութիւններին, բայց որին սէրը այժմ զիւցազնուհի էր դարձրել... Ծեր իշխանը չը կարողացաւ զիմանալ այդ մահվան աղերսանքներին և գրկելով կնոջ ու աղջկանը, շնորհակալ էր լինում Աստուծուն, որ նա, արդար-

ների Աստուածը, այդ կանանց այնպիսի հոգի է տվել: Բայց ո՛չ Իւրանիչը և ո՛չ Յրինին դեռ չէին իմանում, թէ ի՞նչպէս մեռնել գիտեն այդ թոյլ կանայքը:

Մութ նկուղը լուսաւորված է ջահի լուսով, Յրինին հանգնում է վերջին հանգիսի համար իր ամենալաւ և թանկագին հագուստը, այն հագուստը՝ որով նա դուրս էր եկել ժողովրդի առաջ, երբ առաջին անգամ յաղթում էր թուրքերին Վիէնայի տակ, միևնոյն այդ հագուստով նա պսակել էր իր առաջին հանգուցեալ կոնջ հետ. այդ հագուստը հագած ունէր նա և երբ զնում էր Վինէաի փողոցներով, ժողովրդից շրջապատւած, որը ցնծալից ազադակներով ողջունում էր նրան—պսակվելու իր երկրորդ, այժմեան կոնջը հետ.... Հինաւուրց ծերունի Ջերնիչը, նրա դաստիարակը, ինչպէս սովորաբար հանդիսաւոր օրերում օգնում և հագցնու էր իր տիրոջը,—նոյնպէս և այս անգամ հագցնում էր նրան ու լաց էր լինում:

—Ահա, իշխան, ասում է ծերունին, արտասուքը երեսին. ահա թէ ի՞նչ օրի հասայ. կարո՞ղ էի միթէ կարծել ես, երբ ձեզ զարգարում էի ձեր անթառստ պսակի համար, որ կը

զայ ժամանակ՝ երբ պիտի զարգարեմ ձեզ ի վերջին արիւնալից խնջոյքին համար. կարո՞ղ էի միթէ մտածել, որ այս հանդիսաւոր հագուստը ձեզ համար պիտի և՛ թագման պատան գառնայ.... Ահա ի՞նչ օրի հասայ ես....

— Լաց մի լինի, ծերունկ, լաց մի լինիլ, իմ հաւատարիմ Ֆրանց, ընդհատեց իշխանը. դու դեռ մինչև այժմ սրանից աւելի լաւ խնջոյքի համար չես պատրաստել ինձ. դու դեռ չես տեսել այնպիսի յաղթանակ՝ որը ես այսօր պիտի գործեմ. այս օրը ինձ համար մեծ օր է, և հէնց դրա համար էլ ես հագնում եմ իմ այս շորերը. երկու անգամ ես պսակել եմ այս հագուստով, և այսօր երրորդ անգամն է որ պատրաստվում եմ երկնային պսակին արժանանալու. ուրեմն տուր ինձ իմ սուրը:

—Ո՛րը, իշխան, ասում է աչքերը սրբելով հաւատարիմ ծերունին:

—Բոլորը բեր այստեղ, ես ինքս կը ջոկեմ: Բերաւ Ջերնիկը իր տիրոջ բոլոր սրերը և սկսեցին տէր ու ծառայ մտաբերել, թէ նրանցից ո՞րը ո՞ր պատերազմումն է գործ դրվել: Ահա այս սրով Յրինին Բեշթի առաջ էր յաղթութիւն

զործել, բայց այսօրվայ համար նա շատ ծանր է. սրանով նա պատերազմել էր Էսէնզի մօտ... նա հաւատարիմ կերպով էր ծառայել, բայց նա էլ մանր է, իշխանը աւելի լաւ է վեր կառնէ անա այս թեթեւ սուրը... այդ ընծայել է նրան Վիէնաի առաջ նրա հայրը. այդ սուրն է տվել նրան առաջին յաղթութիւնը, առաջին պատիւը, և նա՛ այդ սուրը կը տայ նրան այսօր և՛ վերջին պատիւը: Եւ երկար ժամանակ ձեռքին բռնելով նայում է իշխանը և ապա բացականշում.

—Քեզ հետ, իմ ազնիւ թուր, կերթամ ես այսօր վերջին պատերազմ. թող Աստուծոյ կամքը օրհնեալ լինի... երդվում եմ քեզանով իմ հաւատարիմ սուր, որ ինձ թշնամիները կենդանի չեն վերցնի, չեն քաշ տայ ինձ իրանց բանակը ի խայտառակութիւն իմ այն սակաւաթիւ ընկերների՝ որոնք դեռ ևս կենդանի են և որոնք այժմ ինձ հետ միասին պատերազմի են գնում, և այս երգումը ես այնպէս սուրը կը պահեմ, ինչպէս սուրը է Աստուածը և մեր սուրը հաւատը:

—Իսկ որ զրահը կը հրամայէք ապա—հարցրեց Զերնիկը:

—Ինձ զրահ հարկաւոր չէ. ես դուրս կը գամ թշնամու առաջը առանց զրահի, բաց կուրծքով. ես ուզում եմ մահուան վերջին բօլակում պատերազմի դաշտում լինել նոյնպէս ազատ, ինչպէս և խնջոյքում, ուզում եմ նայել մահուան երեսին առանց ծանր զրահի:

Եւ մերժելով զրահը, իշխանը կապեց միայն պինդ լայն գօտին, ու թագցրեց նրա մէջ ամբողջ բանալիները և հարիւր սփի:

—Շնորք թող չասեն, առաց իշխանը, զրնելով ձեռքը իր ծերունի դաստիարակի ուսին, որը ժպտում էր արտասուքը արանքին. թող չասեն շները, որ ի գուր տեղից աշխատեցին նրանք իշխան Յրինիի շորերը հանելու. ես կենդանի թշնամիների ձեռքը չեմ ընկնի:

Եւ այդ պերճ ու շքեղ հագուստով ու փայլուն դէմքով իշխան Յրինին դուրս եկաւ իր կնօջ ու աղջկայ մօտ: Կինը ճանաչեց իսկոյն հագուստը, մտաբերեց իր հարսանիքը և սկսեց հեկեկալ: Ամուսինը զարմանալի հանգստութեամբ շնորհակալ եղաւ իր թանկագին ամուսնուն այն բօլակների համար, որը նա պարգևել էր իրան. քնքուշութեամբ մխիթարում էր նրան

այն մարտիրոսական պատկի վեհութեամբ, որը նրանք միասին պատրաստում էին իրանց համար, և ապա դառնալով դէպի իր աղջիկը, որը ափսոսում էր կեանքի համար, նա շարունակեց.

— Մի վիճի Աստուծոյ հետ, աղջիկս, շընորհապարտ եղի՛ր նրա հայրական ողորմածութեանը համար, որ նա այդպիսի դաժան ժամանակներում մեր սրտերը ոսկու նման գուռ և մաքուր պահեց: Միայն տառապանքների մէջ է հասունանում մարդու մեծութիւնը. մտաբերի՛ր այն՝ ինչ որ սովորել ես պատմութեան մէջ. բոլոր հերոսները, անցած ժամանակների բոլոր երեւի մարդիկները, որոնցով աշխարհս մինչև այժմ հպարտանում է, բոլորեքեանը գառն նեղութիւններ կրելով են անմահացել. միմիայն կուր մէջ կարելի է ոյժը փորձել, միմիայն դժբաղդութիւնն է մեծ սրտեր ստեղծում..... Ապա դառնալով իր կնոջը ասաց.

— Մէկ էլ երբ կը տեսնվենք քեզ հետ, իմ թշուառ կողակից:

Եվան պատասխանեց.

— Այնտեղ՝ երկնքում դու կը հանդիպես քեզ պէս քաջ ամուսնուն արժանի կնոջդ, մի-

այն այնտեղ կը սպասեմ ես քեզ, և իմ վճիռը հաստատ է:

— Իսկ մեր աղջկանը հետ ի՞նչ կը լինի, — ասաց Յրինին, չը կարողանալով այլ ևս իրան գապել:

Աղջիկը պատասխանեց.

— Իմ մասին մի մտածիր, հայրիկ. ես ձեզանից առաջ կը լինեմ երկնքումը, իմ փեսան չի մերժի ինձ իր վերջին համբոյրը, և նա գիտէր թէ ինչ էր ասում: Այդ րօպէին նրանք անցան նկուղը, նոյնպէս առանց զրահի:

Իսկ Սլապին և Հապրուգովիչը, այդ միակ մնացած զօրավարները, և երիտասարդ Իւրանիչը յայանեցին Յրինին թէ դեռ ևս կենդանի մնացած խումբը հաւաքվել է դրանը և ուզում է վերջին անգամ իր գլխապետին տեսնել:

Դողդոջուն ձեռքերով ծեր իշխանը օրհնեց իր կնոջ ու աղջկանը, ավեց նրանց վերջին համբոյրը, ու միայն այստեղ, չը կարողանալով իրան գապել, լաց եղաւ. բայց զրաից այդ րօպէ լսելի եղան փողի և թմբուկների ձայներ և նա հապճեպով զրկելով աղջկանը, որին այդ

բօսկէսու միսն Նշանեց Իւրանիչի հետ, արագ քայլերով դուրս գնաց իր կնոջ և զօրավարների հետ, թողնելով որ նշանվածները ազատօրէն իրարու հետ մնաս բարև ասեն:

Մնաս բարևը երկար չը տևեց. հօր և մօր դիւցազնական օրինակը, սիրելի փեսին օրինակը, որ հայրենիքի համար մեռնելու էր գնում, ինչպէս ուրիշները հարսանիքի կը գնան, այդ թոյլ օրիորդին այնպիսի հոգեկան ոյժ էր ներշնչել, որ նա պատրաստ էր գոհել իր բոլոր անձը: Ապագան խոստանաւ էր նրան միայն գերութիւն իր բոլոր նախատիւքներով միասին, և նա աւելի բարւոք համարեց մի քիչ վաղ մեռնել այն մարդու ձեռքով, որին նա այնքան սրտագին սիրում էր: Որպէս զի թշնամու ձեռքը չընկնի, նա ազաչեց իր փեսացուին նրա ձեռքով սպանել իրան: Փեսան երկար չը տատանվեց. նա սովեց Հեղինէին իր առաջին և վերջին համբոյրը ու խրեց դ շոյնը նրա սրտի մէջ. այդպիսով նա փրկեց իր սիրեցեալի պատիւը. Հեղինէն մեռաւ, օրհնելով իրան սպանողին, օրհնելով իր մօրը, հօրը և հայրենիքը. մեռաւ նա իր փեսայի գրկում... իսկ վերջինս,

գրկելով նրա մարմինը, տարաւ ու թագցրեց նրան մի գաղտնի խոր մառանում, ուր ոչ ոք չը կարողանայ մինչև անգամ հետքը գանել. իսկ ինքը ամուր և հաստատ քայլերով դուրս եկաւ ամբողջի դուռը:

Այդ ժամտնակ զրանը արդէն հաւաքվել էին բոլոր կենդանի մնացածները, որոնք ընդունակ էին դեռ զէնք կրելու. Եվան ևս այդտեղ էր շահը ձեռքին՝ պատրաստ վերջին քաջագործութեան. զինւորներից մէկի ձեռքում ծածանվում էր սրբազան դրօշակը. երկու մեծ թնդանօթ պատրաստ էին քաղաքի դռների առաջ, որոնք դրված էին շարժական և դեռ նոր կառուցած կամուրջի վրա: Սմբոխը նկատելով, որ Յրինին կամենում է խօսել, լռեց իսկոյն և իշխան Նիկօլա Յրինին սկսեց իր վերջին ճառը իր զինակիցներին:

«Բարեկամներ.

«Վերջին անգամ, մահից առաջ, լսեցէք թէ ինչ կտէ ձեզ ձեր զօրավարը, դուք չը դաւաճանեցիք ձեր երդման. դուք ազնւաբար ծառայեցիք ձեր հայրենիքին և մատնիչներ ձեր մէջ չեղան. չը կայ ոչ մէկը ձեր մէջ՝ որը պատ-

բաստ չը լինի ուրախութեամբ մեռնել հայրենիքի համար. դրա համար, եղբայրներ, շնորհակալ եմ ձեզանից. այժմ հասել է, ո՞վ ընկերներ, մեծ և օրահաստական ժամը. գնենք մեր մահով մարտիրոսական անթառամ պսակը. մինչև այժմ, մենք բաւական աջողակ կերպով կրոււում էինք մեզանից թուով անհամեմատ գերագանց թշնամու հետ և սուլթանը այստեղ կորցրեց քսան հազար ընտիր զօրք, — բայց այժմ մեզ դէմ բարձրացել է մի ուրիշ թշնամի, որին չէ կարելի յաղթել ո՞չ ուժով և ո՞չ էլ քաջութեամբ. մեր ամուր պարսպի խորամասները խորտակված են և հրդեհը լափում է ամբողջ... սոսկալի տարին է կռվում այժմ մեզ հետ. մենք միայն մի օր՝ այ ուստելու պաշար ունենք, նորանից յետոյ մենք կամ պիտի այրվենք, կամ մեռնենք քաղցածութիւնից և կամ թէ պիտի անձնատուր լինենք. բայց նախատինքի գնով մեր կեանքը չենք գնի. ագնիւ մարդը հաւատարիմ կը մնայ հայրենիքին. գնանք, եղբայրներ, գնանք գէպի բաց պաշար, գէպի մահուան հանդէպ, գէնքը ձեռներիս...»

Բողոքի միտքերան հիացմունքի թնդիւնները պատասխան եղան Յրինիի խօսքերին:

— Ո՞ւր է Հեղինէն, հարցրեց Յրինին Իւրանիչին, որը այդ բօպէին նկուզից դուրս էր գալիս:

— Նա երկնքում մեզ համար պտակ է պատրաստում. շուտով, հայր իմ, կը տեսնվենք նրա հետ, — պատասխանեց Իւրանիչը:

— Իսկ դու, Եվան, ինչ տեսակ ես ուզում ինձ հետ բաժանել, դատնալով ասաց Յրինին կնօջը:

— Ես կը բարձրանամ աշտարակի գլուխը և կը դիտեմ այնտեղից մեր կռւին, և երբ նկատեցի, որ դու ընկար, այն ժամանակ կը վառեմ ես քո յուզարկաւորութեան ջանը և կը ձգեմ նրան վառօղի շտեմարանը. այն ժամանակ թո՞ղ թշնամին տիրէ աւերակներին, եթէ կամենում է:

— Մեռիր ուրեմն, գիւցաղնուճի, բացականցեց Յրինին. քո անունը անմոռաց կը մնայ մինչ ցկատարած աշխարհի:

Պաշարող թուրքերի ձայները խլացրին իշխանի խօսքերը. իշխանը իրեց զինուորի ձեռքից

գրօշակը, ավեց Իւրանիչին ու վերջին անգամ  
զրկելով Եվան «մնա՛ք բարեւ Սիգի՛դ, մնա՛ք  
բարեւ ընկերներե՛ք մեռնե՛նք հայրենի երկրի եւ  
հաւաստի համար» ստելով, վայր ձգեց կամուր-  
ջը և բանալով դռները, հրամայեց թնդանօթ-  
ները բաց թողնել:

Ծխի քուլաները քայքայեց և ծածկեցին կա-  
մուրջով վազող հունգարացիներին... Իսկ երբ  
նրանք հասան դաշտը, սկսվեց սարսափելի յու-  
սահատական ճակատամարտը....

Իսկ Եվան վառած ջահը ձեռքին, փայլա-  
տակված նրա լոյսով, կանգնած է աշտարակի  
գլխին և անշարժ դիտում է մարտնչողներին.

Իրար ետեկից ընկնում են հարիւրաւոր  
թուրքեր, ընկնում են և՛ հարիւրաւոր հունգա-  
րացիներ. Իւրանիչը բոլորի առաջ գրօշակը ձե-  
ռին առիւծի պէս կուռում է.... անձ ընկաւ ձե-  
րունի Սլապին, նրան ետեկից Հապրուգովիչը....

Իսկ Եվան աշտարակի վրա դեռ կանգնած  
նայում է.... բայց անձ ընկաւ և՛ վերջապէս  
քաջ Իւրանիչը և նրա հետ շատ հունգարացի-  
ներ. և նա, Եվան, տեսնում է ինչպէս կուռո-  
ղների միջով համարձակ անցնում է գէպի երկ-

տասարդի դիակը, իր թեթև թրով աջ ու ձախ  
կտորելով թշնամիներին, փայլուն սակեգօծ  
շորերով մի ձերունի. տեսնում է ինչպէս հա-  
սաւ նա դիակի մօտ և թռաւ միւս կողմը.  
բայց այդ քայլին մի թուրք իր թրով նրա  
գլուխը ճեխքում է և փայլուն շորերով ձերու-  
նին ընկնում է երիտասարդի դիակի վրա:

Այդ ժամանակ Եվան իր տեղից ցատկե-  
լով ջահը զցեց վառօդի պահեստի մէջ:

Երկիրը սարսափելի զորգաց. և երբ ծու-  
խը՝ որք ծածկել էր թէ՛ ամրոցը և թէ՛ կուռի  
դաշտը, ցրվեց, — փառաշէն Սիգիդի տեղ սկսե-  
ցին երևալ միմիայն միավող աւերակների կոյ-  
տերը.....



У. 1989г.  
Акт № 49  
Вкладн. л. 362





Գ Ի Ն Ն Է 5 Կ Ո Պ Է Կ.

1  
2

« Ազգային գրադարան



NL0325276

H

Арм.

2-8802